



2. ԴԱՎՐԵՇՆԵՐ ԵՎ ՏՇՂԱՆ

Մե տըղե՛մ կեղի, օրըմ կելնի, կերթա՛ սար վեր կան գա՛լու:
Կերթա՛, իրեքյ դա՛վրեշի կը պատահի:

Դա՛վրեշներ տըղային կասեն. – Արի՛, քյե փա՛րա տանքյ,
մենքյ կը կա՛րտանքյ՝ էսա մա՛րմա՛ր քա՛ր կը պա՛ցվի, մըտի մեչ, մեկ
կու՛թի՛մ կա, ա՛ռ էն կու՛թին, արի՛: Չեղի՛ ծեռ տաս հա՛ւրհա՛ւ ապ-
րանքյներ, դա՛ր քա՛ր կը կոժվի, տա՛ւ կը մընաս մեչ, մեկ էլ էնու սեյ-
րին մե կը թա՛լա յոթ ծովու կղզին:

Կասա. – Լա՛վ կեղի:

Եփ դա՛վրեշներ կը կա՛րտան, քա՛ր կը պա՛ցվի, տըղեն կը
մըտի ներս: Կու՛թին կը տընա ուր ջա՛ր, աչք կընգի հա՛ւրհա՛ւ
ապրանքյներ, ծեռ կը թա՛լա, ապրանքյըմ կը վիրուցա, վիրուցելու
պես՝ քա՛ր կը գա՛ հիրար, էտա սեյրին էլ ըզդա՛վրեշներ կը
վիրուցա, կը թա՛լա յոթ ծովու կղզին:

Տըղեն էլ՝ խոր-մոր մեկ տըղա յա:

Տըղի խեռ, մեր իշկացին, օր տըղեն չըկա, հըմեն օր, հըմեն
օր տըղի կըսկըծուն կերթեն տըղի հօղեն, կը լեն չուր հիրիկուն,
հիրիկուն մոր կը գյեն ուրենց տեղ, պառկեն, քընեն:

Տըղեն շատ կը մընա հինե, քիչ կը մընա հինե, մարթ չըգյի-
նա, Աստված գյինա, մեկ էլ կիշկա, օր պատուխանի ծակըմ կա,
օր կիշկա տեխ ծով: Աման ծակ պանցըր ա, ծով ցածըր:

Օրըմ տեսավ, օր տախտակըմ ծովու տալղեն էպիր պատու-
խանի տեմ:

Տըղեն ասաց. — Մընամ էսա տեղ, տը մեռնիմ: Չէ՛, վոլլա՛, ձի թալեն էսա տախտըկի վերեն, յան տ'ազատվիմ, յան տը խեղտըվիմ:

Տըղեն զինքը էթալ վըր տախտըկին, տախտակ պըռնեց, մընաց վըր էնոր: Քանի՛ն տըղեն առավ, տարավ հուրհուշ երկիրըմ, ծըկան ավջիքը եփ օր ծուկ կը պըռնեն, էն մեկ տեսավ՝ տըղեն վիրուց, էպի, իտուր կընգան:

Ասաց. — Կնիկ, տըղա չըկեր մե, Աստված մե մեկ տըղե մ'էտու:

Տըղեն շատ սիրուն, հըմեն մարթ կը գյեր բալըղչու մոտեն առտուր կենեն:

Օրըմ թակավոր վոգիրին կասա. — Քյելի՛, մեկ էրթանքը էն տըղեն տեսնանք խի, օր կասին էմալըմ խորոտ ա:

Թակավոր, վոգիր կը գան, տըղին կը տեսին, օր շատ լավ, շատ խորոտ տըղե մ'ա:

Վոգիր կուգա, օր տըղեն էտա մարթու ծեռնեն առնի, տանի, ուր ախչիկ վերեն փըսակա, էնա էնու տըղա:

Վոգիր, թակավոր կը թոնին, կերթան:

Թակավոր վոգիրին կասա. — Իրավ, շատ սիրուն տըղե մ'եր:

Վոգիր թակավորին կասա. — Թակավոր՛, ես էտա տըղեն էնու ծեռնեն տ'առնեմ:

Թակավոր կասա. — Ինչպե՞ս տ'առնես, գոռավ չառվի, օրենքը չընդուներ:

Վոգիր կասա. — Պերենքը, ըստիպենքը վերեն, ասենքը՝ յան վոգիրի տըներ հըմեն պիտի առնիս, յան էտա տըղեն տաս մե: էնու փարա չըկա, ճարուհատ՝ տըղեն տը տա:

Օրըմ էտա ծուկ պըռնող կասա. — Կնիկ, պե էսա մեր տըղի խալվըներ թախթըփա՛, լըվա, մըկա էնու ջըլեր կեղտ կուկուն էղեր ա:

Մեր լաճուն կասա. — Տըղա՛, քու ջըլեր խա՛ն, թախթըփեմ, լըվամ:

Տըղեն կը խանա էնու ջըլեր, օր թախթըփա:

Մեկ էլ էնու ջաբեն կութին կընգի տակ:

Տըղեն կութին օր կը տեսնա, կասա. — Հա՛յ, միրա՛թ կենաս, քյե խամար անլե՛մ ժամանակ իմ ջան վանվալ: Խի տու ի՞նչ ես:

Տըղեն կուրին էպաց, աչկեց, օր մեկ ծալած մոմպատ հինե կեր: Քըբրիթ եզար, էթիս հինե, տեսավ, օր երկու անփիդ արչիկ թըռան էնտեղ:

Ասին. — Տըղա՛, է՛, մե ընչի՞ կանչեցիր:

Տըղեն ասաց. — Ես ծե չըկանչեցի:

Տըղեն շատ զարմացավ:

Ախչըկներն ասին. — Ետա մոմ օր վանեցիր, մե կանչեցիր, ասա՛ խի ի՞նչ կուգես, մեր թըլըսմ էնի ա:

Մեկէլ տըղեն փըչեց վեր մոմին, մոմ ընցուց: Ետոնք կուրուսան:

Տըղեն ասաց. — Եսի շատ լավ պա՛ մ'ա, էնու խամար դավ-րեշներ կուգեն:

Մընաց օր մ'երկու ընցավ, վոգիր մարթ ղրկեց, ծուկ պըռնո-ղին կանչեց, տարավ:

Ասաց. — Իմ տըներ տաս խազար ոսկի են, յան տաս խազար ոսկի կը տաս, տըներ կառես, ծեռ մոտեն կը քաշեմ, յան քու տը-ղեն կը տաս:

Մարթն գըրնաց, փողոքեց:

Կառավարություն էլ ասաց. — Թակավորի անըն ա, յան տըղեն տը տաս, յան տըներ տ'առնես:

Ծուկ ծախող տանցավ, էկավ տուն:

Մաղդեն էրեր էր, շա՛տ տըրտմեր էր:

Կնիկ ասաց. — Մա՛րթ, առիւ ընչի՞ քու մաղդեն էրեր ես:

Ասաց. — Կնի՛կ, ես մաղդեն չենեմ, ո՞ր տ'ենա: Մեկ տըղա կեր, էն էլ մեր ծեռնեն կառեն:

Կնիկ ասաց. — Մա՛րթ, խըլղի տըղա էր, ժու՛մ քյե, ժու՛մ էլ էնոնց թըխ էղնի: Օր կառնեն, առիւ ի՞նչ տ'ենես:

Եսա զըրուցի վերեն տըղեն մըտավ տուն:

Ասաց. — Ետա ի՞նչ ա, ծեր մաղդեն էրեր եք:

Կասա. — Վոլլա՛, վոգիր քյե մեր ծեռնեն կառի:

Կասա. — Ինչպե՞ս կառի:

Կասա. — Յան վոգիրի տըներ տ'աննիմ՝ տաս խազար ոսկի, յան քյե տը տամ վոգիրին: Ես էլ տաս ոսկի չունեմ, հուստե՞ն պե-րիմ տաս խազար ոսկի:

Լաճ կասա. — Դանդա՛, գըրնա՛ ասա՛ վա՛ղ չէ մյուս օր տաս խազար ոսկին կը պերեն, թող տըներ տա: Ա՛ռ պալըսներ, արի՛:

Մարթն զարմացավ, ասաց. — Ջանըմ, էսա տղղեն ո՞ր տեղեն տաս խազար ոսկի փափրա տը պերա, զէնի ես ծովուց պըռնեցի, պերի:

Ասաց. — Տըղա՛, էսա վոզիր մ'ա, էտա պես սուք մ'ասելուն պես մեր գյըլիս կը զանի:

Ասաց. — Չէ՛, տու գյընա՛, գյընա՛, էսպես ասա:

Մարթն էլավ, գյընաց, վոզիրին ասաց. — Պալնըսներ տո՛ւ, վաղ չէ, մեկէլ օր քու տաս խազար ոսկին կը պերեմ:

Վոզիր գյընաց թակավորին ասաց. — Թակավոր՛, իմ տըներ գացին: Էկավ, ասաց՝ վաղ չէ մեկէլ օր քու փափրեն կը պերեմ, պալնըսներն էլ տարավ:

Մարթն տառցավ, էկավ, ասաց. — Վոլլա՛, պալնըսներն պերեմ:

Լաճ գյընաց էնու հօդի մեչ, քըբրիթ էզար, էտու մոմ, էնու էրկու աֆիդ էկան:

Ասաց. — Յե՛յ, տըղա՛, ի՞նչ կուզես:

Ասաց. — Էսպես պան ա պատահե, տաս խազար ոսկի փափրա կուզեմ:

Ասաց. — Առավոտուն քընից էլնես, պատրաստ ա:

Հիրիկուն խեր էկավ, ասաց. — Տըղա՛, հո՞ւր ի փափրա, խըլիսուն պայման ա, օր պիտի տանեմ, տամ:

Տըղեն ասաց. — Խըլիսուն պատրաստ ա:

Քընավ չուր խըլիսուն, տըղեն էլավ վեր խըլիսուն, տեսավ, օր տաս խազար ոսկին սիվտակ տոպըրկի՛մ մեչ կարած, շինուկ, էնտեղ տըրուկ էր:

Խոր կանչեց, էտու խոր: Խեր առեց, գյընաց, խամբըրեց վոզիրի հանեճ, տըներ մոտեն առավ:

Առավ էնու տան էլած, չէլած, քաշվավ վոզիրի տուն:

Տըղեն օրըմ կը նըստի էնու հօդի մեչ, մոմ կը կըպուցա, էտա էրկու աներևութներ կը գան:

Կասա. — Ի՞նչ կուզես:

Կասա. — Ձի խամար փըշու՛մ խանդե՛ք, օյի՛ն էրեք:

Էնոնք եփ օր բաշլայից զանել, խաղալ, հիսան խելքից, մըտքից կը խանեն:

Թակավորի ախշըկե աչք վերեն կեղի, փանջարից թանաշա կենա:

Եփ օր կը փըչա, կուօին կը տընա ուր ծոց, թակավորի ախչիկ կը տեսնա, կասա. — Ես պիտի էն կուօին էնու ծեռնեն առեմ:

Վերչ ճամխեց, տըղային առավ, էկավ էնու մոտ:

Տըղային ասաց. — Ես քյե շատ կը սիրիմ, տ'եղիս ծի սիրական:

Տըղային խաց կերցուց, գյինի խըմցուց, չուր տըղային խելքյից էխան: Եփ օր տըղեն պառկավ դան, ինքյն կուօին ջիբեն էխան, էտու տըղեն երկու մարթու քանակ, տարան, թալեցին էնու խոր տուն, ոչ ոք մարթ չակխավ:

Եփ տըղի խելք էկավ վերեն, ասաց. — Ես թակավորի ախչըկե մոտն եր, մըկա ինչպե՞ս էկեր եմ, ինգեր եմ ըստա:

Ծեռ էտուր ծոց, կուօին չըկա: Տըղեն կըսկըծու ուր խելք էթալ: Ինգան վարսու մեչ, կը զըվըռեր, կասեր՝ իքյի բալուղ, օն փարա⁴:

Տաննանքյ թակավորի ախչըկե վերեն:

Ախչիկ օրըմ սադրազամի ախչըկներ, վոգրի ախչըկներ կը կանչա պերա, օր օյին էնա էնոնց խամար:

Եփ օր կը գան, սենյակի մեչ կը նըստին, հիրիկուն քըքրիթ կը զանա, կը թոնա մոմ:

Տեսավ, օր քանի որ մեկ ախչիկ կեն էնտեղ, էնչափ անաթ էկան, հըմեն մեկ առան մեչ մեկ ախչիկ, պառկան:

Ախչըկներն ասին. — Աստված քի տուն ավրա՛, էս ի՞նչ երիր մեր գյըլիխ:

Ախչըկներ՝ ամա՛ն-զամա՛ն, թակավորի ախչիկն էլ շիվանի, չըֆաններ վըր ուր:

Մեկէլ ախչըկներ բռնացին, թակավորի ախչըկե խելքյն էկավ վեր ուր, փըչեց մոմ, ախչըկներ ազանվան:

Թակավորի ախչիկ վեր ուր մտածեց, ասաց. — Էսա ծի լայեղ չի, թանկիմ էնեմ ուր տիրոչ, ի՞նչ կենա, թըխ էնա:

Օրըմ թակավոր կը տիսնա էտա տըղին. չուլախ, ծըռու պես մըչ շուկին կը ֆըռեր, կը բոռեր՝ երկու ծուկ, տաս փարա՛:

Կը կանչա տըղին, կը տանի ուր մոտ, կասա. — Քիւ տարտն ի՞նչ ա, տիւ ընչի՞ ընցնա եղեր ես:

⁴ Երկու ծուկ, տաս փարա (Շ. Բ.):

հնքյն կասա. — Ձի կութի՛մ կեր, թակավորի ախչիկ ծիզնից առեր ա:

Թակավոր ախչիկ կը կանչա: Ախչիկ թակավորին կասա. — Ես հօդի մեչ նըստուկ տեսա, օր էսա տըղեն մոմ վանեց, ջուխտըմ ախչիկ էնու տեմ խանղցին: Ես էլ առի էնու մոտեն, ամա էնու մոտեն գյեշ պաներ տաւս կը գան, մենք չընք կանա պանցուցե:

Թակավոր կաննի կութին, կը տա տըղին:

Կասա. — Էսու մարիֆաթ ի՞նչ ա:

Տըղեն կութին եփ օր առավ, խելք էկավ վերեն, խելանցանցավ:

Քյըբրիթ եզան, էտու մոմին: Էրկու անփիդ թըռան էն տեղ:

Ասին. — Յե՛, տըղա՛, ի՞նչ կուզես:

Ասաց. — Կուզեմ, օր թակավորին մե քիչ մը ժելելիք էնեքյ:

Եփ օր գարկին-խաղցին, թակավոր խելքից, մըտքից էլանվ:

Թակավոր ասաց. — Իմ ախչիկ էսա տըղին պիտի տամ, հանձ սիրուն ա, հանձ էսա մարիֆաթ էնու ծեռն ա:

Ախչիկ էպի, փըսակեց տըղի վերեն:

Շատ քիչ ժամանակ մընաց, տըղեն ասաց. — Չէ՞ ես խեր ունիմ, մեր ունիմ, մըկա իմ խեր, մեր ի՞նչըխ եմ անքե, ես տ'երթամ իմ խոր երկիր, խընդ իմ խեր-մեր:

Տըղեն էն հիրիկուն էսպես կը մտածա, թակավորի ախչիկ կասա. — Տըղա՛, ընչի՞ չըս քյըմեր, ի՞նչ կը մտածես, ի՞նչ ա քու տարտ:

Կասա. — Թակավորի՛ ախչիկ, ծի խեր կա, մեր կա, անլե՛ մ ժամանակ ես կուրսեր եմ, էնոնք մըկա ի՞նչ կասկածի մեչ եմ, ես տ'երթամ իմ խոր երկիր:

Թակավորի ախչիկ ասաց. — Որ տեղ օր էրթաս, չըխտ ծի խընդ քյե տը տանես, չէ՞ քու կնիկն եմ:

Մեկէլ հիրիկուն՝ պառկելու ժամանակ, մոմ կըպուց, էրկու անփիդ էկան:

Ասաց. — Ի՞նչ կուզես:

Ասաց. — Կուզեմ, օր մենք քյըմուկ էսա մեր տեղ ջըլով, իմ խոր տան մեչ, իմ հօդի մեչ էլնեմ: Առավոտուն էլնեմ վեր, ծի էն տեղ տիսնամ:

Եփ օր էնոնք կը քյենն, անփիդներ զենոնք կը վերցին, էնպես կը տանեն էնու խոր տուն, էնու սենյակի մեչ կը տընեն:

Խեր ու մեր չէ՝ հըմեն օր կերթեն տըղայի սենյակի մեջ կը լեն, առավոտուն կերթան, սենյակի տուռ կը պանան, օր էրթան ներս, կիշկան, օր էրկու խոզի ներս պառկուկ են:

Մեյմըկու կասեն. — Ջա՛նըմ, էսա տուռ փակուկ ա, էսա էրկու խոզին ո՞ր տեղից էկած, պառկած ա ըստա՛:

Կերթան, կիշարցընեն, կը տեսին, օր ուրենց տըղեն, մեկէ կնիկ մ'էլ կա, տըղայի կնիկ:

Շատ կուրախման, կը խընդանան, օր տըղան էկեր ա:

Տըղեն օրըմ կը մընա, էրկու կը մընա, ինքյ ուր կը խանցընա. «Ջա՛նըմ, էն էրկու դավրեշներ ի՞նչըխ էղան, չէ՞ որ ծի ասին՝ մե մտախան չէնես: Էն օր, օր ծի մըտուցին քանի մեջ, ասին, օր սեյրին ավրի, սեյրին մե կը թալա յոթ ծովու կղզին»:

Շուտըմ մոմ կը կըպուցա, էրկու անփողներ կերևան, կասեն. — Ի՞նչ կուզես:

Կասա. — Էն օր, օր ես ծեր կուրին պերի, ցուխտըմ դավրեշ կուրիսան, կուզեմ, օր էն դավրեշներ պերեքյ:

Կասեն. — Տըղա՛, մենք շատ գիռ կը պերենքյ: Էրթանքյ, թե պերինքյ՝ աղեկ, թե չէ՛ մենքյ էլ չընքյ կանա գա: Յոթ ավուր վերեն էկանքյ՝ էկանքյ, չէկանքյ՝ էլ ծեռ մեր մոտեն քաշի:

Գանցին: Յոթ օր օր թըմըմավ, առան էրկու դավրեշ, էկան:

Դավրըշներու մուրսըներ էկի, կեղտոտած:

Տըղեն տարավ պանդիս, մեկ թանիզըմ լողկըցուց, խալավ խագուց, էպի:

Էպի, մեկ խարցում էրաց:

Ասաց. — Դավրեշներ, էնտեղ ի՞նչ տեսակ գանցիքյ, ի՞նչ տեսակ էկաքյ, ի՞նչ կեր էնտեղ, ի՞նչ չըկեր:

Ասաց. — Տըղա՛, էնոնց թակավոր էն տեղն էր, անցնի՞⁵ թակավորն էր: Օրական մեկ անգամ մե կը կանչեր էնտեղ մանքանա: Օրական էրկու անգամ էլ մե ծեռ ու փետ կեր, թե՛ տուռ ընչի՞ իմ կուրին տըվիքյ տանել: Մեր հալեն էսին էր:

Տըղեն դավրեշներուն հըմեն մեկին չորս-խինգ խագար ոսկու չափին փարա էտուր, խըրկեց ուրենց տըներ:

Տըղեն տարի՛մ, էրկու մնաց: Խեր-մեր մեռնելեն ետ ուր կուրին կուրիսեց:

⁵ Զինների թագավոր (Ծ.Բ.)

Գլխեր, ցերեկ էտա կութու վերեն կը մըտածեր, ապա՝ ծեռ-
նեն գացեր ա:

Քանի՛մ տարի մընաց, էնու ախչիկ մ'եղավ:

Ախչիկ եղավ քսան տարեկան, օրըմ ախչիկ կը տեսնի՝ մեկ
մարթ մ'էկեր ա հավուզի վերեն, թասըմ կա էնու ծեռ, պըստիկ
թասըմ, կը տա ճըրհու անեծ, կը լըցա ուր ծոց:

Ախչիկ ասաց. — Ջա՛նըմ, էսա տըղեն ծո՞ւռ ա, թասով ճաւը
կը լըցա ուր ծոց:

Ախչիկ կերթա, տըղին օր խառցըմա, կը տեսնի չէ՝ թաս քան-
նի տա ճըրհու հանեծ, թասի ճաւը կէղի ոսկի, կը տանտըկա ուր
ծոց:

Ախչիկ տըղին կասա. — Ի՞նչ տամ քե՛ն՝ էտա թաս տաս ծի:

Տըղեն կասա. — Տիւ կը խիս, օր իմ մոտ հիլին փաւրա յա, ես
փաւրեն ի՞նչ էնեմ, օր պառկես մո ծի, թաս տը տամ քե՛ն, չըխո՛ չըմ
էտա:

Պառկավ, մոտեն թաս կառի, կը տըղովմա:

Եփ օր մարթ տեսավ, թի ախչիկ տըղով ա, էլավ մըլեց տիւս:

Ասաց. — Էլի՛, իմ երկրից գընա՛, մե ամոթ ա:

Ախչիկ գընաց հուրհուշ երկիրըմ: Մեկ ճանխի վերեն խա՛մ
շինեց, օր էնու պատեր հըմեն ոսկի, էնու տանիս հըմեն ոսկի:
Խանին երկու տիւռ շինեց, էրթըցող, գալացողին փաւրա կը տեր,
կերթեն:

Օր մ'էտա մարթիւ դավրեշներ կը գան, կը պատահեն էտա
խանին:

Էն ժամանակ ինչ կը խեն, կը տեսնեն, օր խան հըմեն ոսկով
շինուկ ա:

Կը տաննան գան, կը պատահեն օրըմ էնոնց կութու տիրոջ
մոտ, կը տեսնեն, օր էն մարթ ֆուխարացեր ա:

Կասեն. — Դե՛յ, մարթ, տիւ ընչի՞ էսպես ֆուխարացեր ես:

Ասաց. — Չէ՛ կուրին կուրիսցուցեր եմ: Քանի էն կուրին մը ծի
էր, ծի պես հարուստ չըկեր, որքան ուզեր, ծի փարա կէղեր:

Դավրեշներն ասին. — Դե՛յ մարթ, մենք էկանք, մեկ տեղըմ
սարե՛մ շիներ ա, հըմեն ոսկի ա էնու պատեր: Էրթըցողին, գալա-
ցողին ճանգ-ճանգ ոսկի կը տա:

Մարթն ասաց. — Օր ընցկուն ա, ես պիտի էլենեմ, էրթան էն
տեղ, խի չէ՞մ կանա մե քիչ փաւրա պերի:

Գյրնաց, գյրնաց, սարեն կընդավ, օր ոսկով շինուկ էր:
Ախչիկ ըզխեր ճանչըցավ, աման խեր ախչըկան չըճանչը-
ցավ, ընչի՝ օր ախչիկ մարթու խալավ էր խագոյե:
Խեր տարավ էնու սենյակի մեջ, լավ պատվեց:
Խերն ասաց. — Էսա ոսկե տուն, ոսկե պատեր ի՞նչըխ ես
շինե:

Ախչիկ ասաց. — Ընծի թասըմ կա, էնորով ճուր լըցեմ, տան-
տըկեմ, կէլնի ոսկի: Լըցեմ, տանտըկեմ, կէլնի ոսկի: Էնտուց շի-
նեցի:

Ասաց. — Ի՞նչ տամ քյե՝ տու էտա թաս տաս ծի:

Ասաց. — Թասն առեր եմ պառկելով, տուն էլ պառկի, թաս
տամ քյե:

Խեր ասաց. «Վոլլա՛, ըստա՛ ծի վո՞վ կը ճանչընա, ես տը
պառկեմ, թաս մոտեն առնիմ»:

Էլավ, շըլվար եցկեց տակ, ոռ էպաց, ախչիկ չափալե մ'եզար
վըր ոռուն:

Ասաց. — Տու ի՞նչըխ ես, տու մարթ մ'ես, թասի խամար ոռըտ
կը պանաս, ես օր ախչիկ մ'էի, թասի խամար չըպառկե՞ խընդ
ջըիելի՛մ: Տու էլար, էնու խամար ծի քու երկրեն, քու տընեն տուս
մըլիցիր:

Նոր էնտեղ խեր ճանչըցավ ուր ախչըկան, փընտըռեց, էն
թասի տերն էլ էպի, լաճուն պըսակեց վեր ուր ախչըկան, ապըր-
վան մեկտեղ:

